«ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ

ARMENIAN WATER AND SEWERAGE CJSC

www.armwater.am

ՀՐԱՎԵՐ

19. 05. 14թ. N: ՇԻՖ 1-03/1204 **“Հայջրմուղկոյուղի”ՓԲԸ**-ի կարիքների համար՝ ***քիմիական նյութերի*** ձեռքբերման

Ձեր N: ____________________

Հարգելի տիկնայք և պարոնայք

**ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/15** ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ***“Հայջրմուղկոյուղի” ՓԲԸ***-ի (այսուհետև՝ Գնորդ) կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել Գնումների աջակցման կենտրոնի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 4-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով նախատեսված շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ***քիմիական նյութեր:*** Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում ***ՀՀՏԿՆՋՏԴԿ-ՀՋԿԸ-ՇՀԱՊՁԲ-11/15-14/26***

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ***ք.Երևան, Վարդանանց փակ.8, 6-րդ հարկ*** հասցեով, մինչև ***2014թ. հունիսի 04-ը, ժամը՝ 15:00-ն:*** Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար *Անդրանիկ Մանուկյանը*: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն ***ք.Երևան, Վարդանանց փակ.8, 6-րդ հարկ*** հասցեում, 2014թ. ***հունիսի 04-ին, ժամը՝ 15:00-ին:***

Գնման առարկա է հանդիսանում ***“Հայջրմուղկոյուղի” ՓԲԸ***-ի կարիքների համար ***քիմիական նյութերի*** ձեռքբերումը:

***“Հայջրմուղկոյուղի” ՓԲԸ***-ի կարիքների համար ***քիմիական նյութերի*** մատակարարման (որը կազմված է **1** չափաբաժնից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N3 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում ***(Հավելված N1)***, ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ ***(Հավելված N2):*** Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել **ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/15** ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Մասնակիցը հայտով ներկայացնում է առաջարկված ապրանքի ծագման երկիրը իսկ համարժեք ***գնման առարկայի*** դեպքում՝ ներկայացնում է համարժեք ***գնման*** առարկայի անվանումը և ծագման երկիրը (ըստ պահանջի):

***“Հայջրմուղկոյուղի” ՓԲԸ***-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ **mak@armwater.am**:

Հեռախոս՝ (010) 54-28-76:

Պատվիրատու՝ ***“Հայջրմուղկոյուղի” ՓԲԸ***

***Գործառնական տնօրեն*** ***Ա. Բիոլայ***


Գլխավոր գրասենյակ
ՀՀ, ք. Երևան, 0010,
Վարդանանց փակուղի 8

Head Office
8 Vardanants blind alley,
Yerevan, 0010, Armenia

«Հյուսիս-Արևմտյան»
տարածքային մասնաճյուղ
ՀՀ, ք. Աբովյան, 2201, Սարալանջ 2

"North-West"
Regional Branch
2 Saralanj street, Abovyan, 2201, Armenia

«Կենտրոն-Արևմտյան»
տարածքային մասնաճյուղ
ՀՀ, ք. Արտաշատ, 0701, Արազի 14

"Center-West"
Regional Branch
14 Araz street, Artashat, 0701, Armenia

«Հարավային»
տարածքային մասնաճյուղ
ՀՀ, ք. Սիսիան, 3501, Ն. Ադոնցի 11

"South"
Regional Branch
N. Adonts 11, Sisian, 3501, Armenia

1-71
info@armwater.am